

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ
ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀԷԲՊՆՋՏՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/5-Ն**

ք. Երևան

«23» հոկտեմբերի 2017թ.

ՀՀ ԷԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտեն, ի դեմս Մ. Մակինյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և ՀՀ «Հայջրնախագիծ ինստիտուտ» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Յու. Ջավադյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Հայաստանի Հանրապետության Ազատի ջրամբարի հատակային ջրթողի վերակառուցման և վերազննման աշխատանքների համար անհրաժեշտ նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Նախագծային փաստաթղթերի մշակման ժամանակ՝

1) նախագծման համար հիմք հանդիսացող նախագծային առաջադրանքների տեխնիկական բնութագրերը կազմել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,

2) ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,

3) ներկայացնել շինարարական ծրագրի կատարման համար անհրաժեշտ լիցենզիային, տեխնիկական միջոցներին և աշխատանքային ռեսուրսներին ներկայացվող պահանջները,

4) պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնել թղթային և էլեկտրոնային տարբերակներով,

5) ներկայացնել ըստ աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային գրաֆիկը:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 4 980 000 (չորս միլիոն ինը հարյուր ութսուն հազար.) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը

կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.4.1 Շինարարական ծրագրերի կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծողը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված և փորձաքննական եզրակացություն ունեցող նախագծային փաստաթղթերի ամփոփ նախահաշվով չնախատեսված աշխատանքների ծախսերի համար նախատեսված չափը, ներառյալ ավելացված արժեքի հարկը, գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների չափին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված և փորձաքննական եզրակացություն ունեցող նախագծային փաստաթղթերի աշխատանքների ամփոփ նախահաշվով չնախատեսված աշխատանքների ծախսերի համար նախատեսված չափը, ներառյալ ավելացված արժեքի հարկը, գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների հանրագումարի չափին:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի

«Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Պայմանագիրը կազմված է 13 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտե

ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

Հ/Հ 900011015915

ՀՎՀՀ 02555816

Կոմիտեի աշխատակազմի ղեկավար

Մ. ՄԱԿԻՆՅԱՆ



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ


«Հայջրնախագիծ ինստիտուտ» ՓԲԸ

ք. Երևան, Վ. Վաղարշյան 12

«Հայրիզնեսրանկ» ՓԲԸ

Հ/Հ 1150000088680300

ՀՎՀՀ 00012859

 ՅՈՒ. ԶԱՎԱԴՅԱՆ



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի								
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	կատարման	
							հասցեն	ժամկետը**
1	71241200/310	Հայաստանի Հանրապետության Ազատի ջրամբարի հատակային ջրթողի վերակառուցման և վերազննման աշխատանքների համար անհրաժեշտ նախագծանախահաշվային և փաստաթղթերի կազմման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքներ	դրամ	4 980 000	4 980 000	1	ՀՀ Արարատի մարզ	20 օր

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

ՀՀ Ազատի ջրամբարի (ԱԴՀ=1013,9մ; ՆԴՀ=1049,5մ; ՄՀՆ=1013,9մ; Մլլը=70մլն.մ3; Վօգոտ=60,8մլն.մ3; Վմծ=9,2մլն.մ3) հատակային ջրթողի վերակառուցման և վերազննման աշխատանքների համար անհրաժեշտ նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքներ

Առաջադրանքի պայմանները

Ընդհանուր տվյալներ

Ազատի ջրամբարի հատակային ջրթող կառուցվածքը իրենից ներկայացնում է շինարարական թունելի մեջ մոնտաժված ճնշումային խողովակաշար, որը նախատեսված է թասի մեոյալ ծավալի նիշի սահմանագծից ցածր տիրույթում պատվարի վիճակի զննման, նորոգման աշխատանքների իրականացման, անհրաժեշտություն առաջանալու դեպքում թասը ջրից դատարկելու, ինչպես նաև /համաձայն նախագծի/ մինչև մեոյալ ծավալի ամբողջական տղմակալումը մեոյալ ծավալից շուրջ 8.0 մլն. խ.մ ջուրը ոռոգման նպատակով օգտագործելու համար:

Այդ նպատակով շինարարական թունելի սկզբնամասում կառուցված է հատուկ ջրընդունիչ հանգույց՝ 992.8մ ջրընդունման շեմի նվազագույն նիշով:

Բետոնով երեսապատված շինարարական թունելի /մուտքը ՊԿ 1+87-ում, 430մ երկարությամբ, 3.7x3.4մ տաշտածև կտրվածքի/ ամբողջ երկարության վրա տեղադրված են 1200մմ և d=325մմ տրամագծերով մետաղյա խողովակաշարեր, որոնց սկզբնամասի 273 մ հատվածը ներառված է թունելի կտրվածքը լցափակող բետոնի զանգվածի մեջ:

Բետոնե խցանից /ՊԿ 4+50/ հետո d=1200մմ տրամագծով խողովակաշարը՝ թունելի հատակին տեղադրված է 20 միջանկյալ և 4 խարսխային բետոնե հենարանների վրա, իսկ աջ պատի երկայնքով տեղադրված d=325մմ տրամագծով խողովակաշարը՝ 18 բետոնյա հենարանների վրա: Երկու խողովակաշարերի միջև՝ թունելի հատակին առկա է նեղգիծ երկաթուղի՝ վագոնետային սայլակով: Ճնշումային d=1200մմ ճ=8մմ խողովակաշարի սկզբնամասում /բետոնե խցանից հաշված/ տեղադրված են երկու՝ N 1 և N2 շրջասկավառակային 32c 908բ, Py-10 տիպի փականները:

Նույն տեղում մոնտաժված են նաև d=150մմ-ոց 3 հատ, d=1200մմ փականները շրջանցող ջրագծերի փականները:

Շրջասկավառակային առաջին և երկրորդ փականների միջև տեղադրված է $d=1200$ մմ խծուծային կոմպենսատոր:

Խողովակաշարի վրա նմանատիպ կոմպենսատորների թիվը 3-ն է: Խողովակի վերջնամասում, փականի շենքում, տեղադրված են N 3 և N 4 փականները, ընդ որում N 3-ը շրջասկավառակային տիպի է, N 4-ը՝ ջրահոսքը կարգավորող, սեպային տիպի խողովակային փական է:

Խողովակաշարը N 4 կարգավորիչ փականից հետո շարունակվում է ևս 2.2մ և ավարտվում ջրմարիչ հորում: Խողովակի վերջնամասի հատակի նիշը 975.9մ է, ջրմարիչ հորի ջրթափային ճակատի նիշը՝ 977.0 մ է:

Խողովակաշարի ջրթողունակությունը ՆԴՀ-ի հորիզոնի պայմաններում՝ ըստ նախագծի կազմում է 13.75 խ.մ /վրկ:

Փականային շենքում խողովակաշարից սկիզբ է առնում $d=520$ մմ տրամագծով ջրատար ճյուղը, որը սնում է քառաստիճան պոմպակայանի ջրասնուցող գծի դյուկերը և ԴՎինի ջրանցքին ջրալրում իրականացնող պոմպը:

Ջրատար ճյուղի երկարությունը 120 մ է:

Ճնշումային $d=325$ մմ $\delta=6$ մմ խողովակաշարի սկզբնամասում /բետոնե խցանի մոտ /տեղադրված են $d=300$ մմ 304 66p, PY -10 երկու փականներ, եվս մեկ նույնատիպ փական տեղադրված է խողովակաշարի վերջում /թունելի ելքամասում՝ Պ 4 4+56-ում/:

Թունելից դուրս եկող /ծորանցվող և ծծանցվող/ ջրերի ջրիեռ առուն, $d=300$ մմ խողովակով հատելով փականային շենքի հատվածը, բեռնաթափվում է ջրմարիչ երկրորդ հորում: Այն նախատեսված չէ մեծ ելքերի ջրահեռացման համար:

Առկա վիճակը

Թունելի էլ. լուսավորության համակարգը սնվում է հորանային ТСШ 380/36վ տրանսֆորմատորից: Խողովակաշարի N 1 և N 2 ջրասկավառակային փականների էլ. շարժիչները սնվում են փականային շենքից սկիզբ առնող առանձին մալուխային գծով:

Թունելի բետոնյա երեսապատվածքի ամբողջ մակերեսով և շինարարական ու նստվածքային կարերից տեղի է ունենում ջրի ծծանցում, ծորանցում: Թունելը օդափոխման համակարգ չունի:

Էլ.լուսավորման համակարգի լարային ցանցը կրող էլ. մեկուսիչները շատ տեղերում պոկված, կախված վիճակում են:

Փականների էլ. շարժաբեռիչների թողարկիչ սարքերը, մալուխները գտնվում են ծորանցվող, ծծանցվող ջրերի ազդման տակ, էլ. բաժանիչ, թողարկիչ վահանակները շարքից դուրս եկած, անաշխատունակ վիճակում են: Ռեդուկտորների էլ. շարժիչները հանված են:

Թե լուսավորման ցանցի լարային, թե մալուխային տնտեսությունը և թե էլ. թողարկիչ վահանակները, էլ. սարքերն ու էլ. շարժիչները նախատեսված չեն հանքա-հորանային առկա պայմաններում աշխատանքի համար:

Թունելի N 1 և N 2 $d=1200$ մմ շրջասկավառակային փականները /աշխատում են 1976թ/ շարքից դուրս են եկել, չեն ապահովում ջրաշիթի ամբողջովին փակումը:

Դրանց մոտ տեղադրված $d=150$ մմ շրջանցիկ գծերի (ծայրագ) փականները ամբողջությամբ ենթարկված են խորը կոռոզիայի, դրանց հետագա բանեցումը դարձել է անհնարին:

Շրջասկավառակային $d=1200$ մմ N 3 փականը մեծ դժվարությամբ է փակվում-բացվում, նկատվում էլ. շարժիչի գերբեռնում:

Կարգավորիչ N 4 $d=1200$ մմ փականը /սեպային տիպի/ վերջին չորս տարիների ընթացքում ունեցել է աշխատանքի 6 խափանման դեպք՝ /պարուրակային ձգածողի լուռում/ սկավառակների լուռում/, որոնց վերացման համար պահանջվել է ջրի մատակարարման դադարեցում, վերամբարձ սարքավորման օգտագործում: Փականը լրիվ փակ վիճակում ևս չի ապահովվում ջրահոսքի դադարեցումը, արտահոսքը կազմում է շուրջ 0.1-:-0.2 խ.մ./վրկ:

Ներկայումս առկա չորս փականներից՝ N 1, N 2-ը անաշխատունակ վիճակում են; N3 և N 4-ը բանեցվում են մեծ զգուշությամբ և չեն ապահովում ջրի լրիվ փակումը, ջրահոսքը կազմում է 0.1-:-0.2 խ.մ./վրկ:

Մյուս՝ $d=325$ մմ խողովակաշարի վրայի $d=300$ մմ ձեռքի շարժաբեռմամբ փականներից առաջին երկուսը չաշխատող, խիստ կոռոզիայի ենթարկված վիճակում են:

Հատակային ջրթողի երկու խողովակաշարերն ամբողջությամբ ենթարկված են ակտիվ, խորը կոռոզիայի և փականային ու էլ. տեխնիկական սարքավորումների, վերը նկարագրված տեխնիկական վիճակով, հետագա շահագործումը անթույլատրելի է և կարող է բերել վթարի:

Ճնշումային խողովակաշարի $d=500$ մմ ճյուղը, փականային շենքից դուրս գտնվող 120 մ երկարությամբ,

ամբողջովին քայքայված /առանձին հատվածներ ցանցկեն վիճակում են/, շարքից դուրս եկած վիճակում է և դրա շահագործումը դարձել է անհնար:

Տեղին է նշել, որ խնդրահարուց է նաև $d=1200$ մմ ճնշումային խողովակաշարի ամբողջությամբ ջրից դատարկման խնդիրը, քանի որ վերջինիս վերջնամասի վրա, ջրծեծ-ջրմարիչ հորում առկա է շուրջ 0.2 մ ջրի շերտ: Հորի ջրի դատարկման $d=150$ մմ տրամագծով խողովակը չի կարող ապահովել ճնշումային խողովակից դուրս եկող, փականների մաշվածքով, կամ անսարքությամբ պայմանավորված չկարգավորվող ջրահոսքերից հորի արագ ինքնահոս դատարկումը, որպեսզի հնարավոր լինի խողովակաշարի վերջնամասի վրա կատարել պահանջվող որևիցե նորոգման աշխատանք /զոդում, N 3 կոմպենսատորի խծուկի փոխարինում և այլն/:

Թունելի հատակին մոնտաժված նեղգիծ երկաթուղին ևս կարիք ունի նորոգման՝ փայտակոճերի մի մասը ենթակա են նորով փոխարինման:

Ամփոփելով, իմի բերելով և ընդհանրացնելով հատակային ջրթողի առկա տեխնիկական վիճակը, լուծում պահանջող հետևյալ հիմնախնդիրներն են՝

- թունելի ե/բետոնյա երեսապատվածքի հակաֆիլտրացիոն միջոցառումների մշակում և իրականացում.
- երկու ճնշումային խողովակաշարերի ($d=1200$ մմ և $d=325$ մմ) մետաղյա պատերի վիճակի գնահատում /պատերի հաստության, կոռոզիայի ազդեցության գնահատում, մետաղի հոգնածության երևույթների վերահանում/ և պահանջվող միջոցառումների մշակում, իրականացում /հակակոռոզիոն, անհրաժեշտության դեպքում խողովակաշարի ուժեղացում, ամբողջական կամ հատվածային փոխարինում նորով/.
- դեպի քառաստիճան պոմպակայանի դյուկեր գնացող ճնշումային ճյուղի $d=530$ մմ քայքայված հատվածի փոխարինում նոր խողովակով / $L=120$ մ/, լրացուցիչ նոր երկու $d=500$ մմ փականների տեղադրմամբ:
- երկու խողովակաշարերի վրայի ջրահոսքի կառավարման և կարգավորման փականների փոխարինում նորերով, ներառյալ աշխատանքային փականները շրջանցող ջրագծերի վրայի փականները (байпас).
- փականների էլ. սնուցման և կառավարման համակարգերի արդիականացում՝ դրանք համապատասխանեցնելով թունելի առկա միջավայրի պայմաններին.
- թունելի էլ.լուսավորման համակարգի արդիականացում, համապատասխանեցում թունելի միջավայրի պայմաններին.
- նեղգիծ երկաթուղու վերանորոգում /փայտակոճերի մասնակի փոխում նորերով, դրանց քայքի համապատասխանեցում ստանդարտներին/
- խծուձային կոմպենսատորների վերանորոգում, վերալիցքավորում /սեղմիչ և պահանգային օղակների ստուգում, նորոգում; գամասեղների /аռотыка/ փոխարինում նորերով; կոմպենսատորների խծալցավորում խծուձվածքով և պարափզոլով/.
- թունելի վերջնամասից ջրերը երկրորդ ջրմարիչ հոր տեղափոխող /փականային շենքի շրջանցմամբ/ $d=1200$ մմ տրամագծով նոր ջրագծի կառուցում /փակ խողովակաշար/
- ջրծեծ-ջրմարիչ հորի դատարկման խողովակաշարի կառուցում՝ հորի կողային պատից դեպի գետահուն / $L=20$ մ/:

Հաշվի առնելով առկա իրավիճակը կատարողը պետք է՝

1.1 Աշակի թունելի երեսապատվածքի ու կարերի ջրամեկուսացման միջոցառումներ /հակաձծանցումային, հակաձորանցումային/, նախապատվությունը տալով շինարարական, մագանդալային ներթափանցման ներգործության, ջրամեկուսա-նյութերի /խառնուրդների/ կիրառմանը:

1.2 Ուսումնասիրի երկու խողովակաշարերի / $d=1200$ մմ և $d=325$ մմ/ խողովակների վիճակը, հիմնավորվի դրանց հետագա անվտանգ շահագործման պիտանելիությունը՝ տրվի համապատասխան լուծում: Ուսումնասիրության արդյունքները նախագծում պետք է ներառվեն առանձին բաժնով: Խողովակների հակակոռոզիոն միջոցառումների մշակման ժամանակ պետք է հաշվի առնվեն թունելի միջավայրի, խողովակների աշխատանքի պայմանները, ջերմային ռեժիմները ու սահմանվի աշխատանքների իրականացման առավել օպտիմալ ժամանակաշրջանը:

1.3 Փականային տնտեսության վերազինման, վերակառուցման բաժնում պետք է լուծվեն փականների տիպերի ընտրության, դրանց տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը ջրամբարի առավելագույն լցվածության պայմաններում նախագծային առավելագույն ջրթողունակության ապահովման պահանջներին: Հաշվի առնվեն թունելի առկա կտրվածքի պայմաններում դրանց տեղափոխման, մոնտաժման պայմաններն ու պահանջները: Որպես պարտադիր պայման պետք է ապահովվի փականների բացում-փակումը, թե էլ.

շարժաբերմամբ և, թե ձեռքով:

1.4 Առանձնակի լուծում է պահանջում N 1 փականի նորով փոխարինման աշխատանքների իրականացման մասնաբաժինը, քանի որ այն պարտադիր պետք է ներառնի ջրամբարի թասում ջրի հորիզոնը նվազագույն հնարավոր նիշին հասցնելու և աշխատանքների իրականացման ժամանակահատվածում գետահոսքի ջրերի մուտքը խողովակաշար ժամանակավորապես դադարեցնելու անհրաժեշտ ու երաշխավորված միջոցառումների իրականացումը:

Այս մասով նախագծային լուծումը պետք է ապահովի անհրաժեշտ աշխատանքների իրականացումը գետի աշնան-ձմեռային շրջանի նվազամակարդակի ընթացքում, հնարավոր նվազագույն ժամանակահատվածում, որպեսզի չխաթարվի ջրամբարի ջրալցումը ու գետահոսքի չկարգավորվող ջրի կորուստները հասցվեն նվազագույնի:

1.5 Թունելի էլ. լուսավորման և փականների շարժաբերիչների էլ. սնուցման համակարգերի նախագծում: Ընտրվեն առավել հուսալի և էներգախնայող էլ. լուսատուներ, էլ. բաշխիչ, էլ. կառավարման վահաններ, էլ. շարժիչներն ու էլ. տեխնիկական հանգույցները՝ առավել հարմարեցված լինեն թունելի պայմաններում աշխատանքի համար:

1.6 Տրվեն լուծումներ՝ թունելի վերջնամասից և ջրծեծ-ջրմարիչ հորից ջրերի ինքնահոս եղանակով հեռացման խնդրին: Թունելի ելքամասի համար նախատեսել ոչ պակաս 1200 մմ տրամագծով, իսկ հորի համար՝ 530մմ տրամագծով ջրիեռ խողովակների տեղադրում:

1.7 Նախագծում առանձին բաժնով տրվեն կոմպենսատորների, ԴՎինի ջրանցքի ջրալրացման ու քառաստիճան պոմպակայանների դյուկերի ջրերի մատակարարման d=500մմ տրամագծով ճյուղի, նեղզիծ երկաթգծի նորոգման, վերականգնման աշխատանքների լուծումները, աշխատանքների ծավալներն ու լոկալ նախահաշիվները:

Ցուրաքանչյուր աշխատանքի համար կազմել առանձին ծավալաթերթ, նախահաշիվ և ամփոփ ծավալաթերթ ու ամփոփ նախահաշիվ՝ ամբողջ աշխատանքների համար:

2.Նախագծային լուծումներին ներկայացվող տեխնիկական պահանջները

Հատակային ջրթողի վերակառուցման, վերագինման ցանկացած նախագծային լուծումները պետք է՝
ա/ հիմնված լինեն ՀՀ-ում գործող տեխնիկական նորմերի, ստանդարտների, միջպետական շինարարական նորմերի վրա /ՀՀՇՆ, СНиП, ГОСТ, СТСЭВ, ՀԱՏ, ՇՆՁ, МСН և այլն/:

բ/ ապահովեն ճնշման խողովակաշարերով ջրի հոսքերի /ելքերի մեծության/ սահուն փոփոխության /կարգավորման/ և տեղափոխության հնարավորություն՝ 0-ից մինչև առավելագույն թույլատրելի մեծության տիրույթում, բացառվի հիդրավիլիկ հարվածի առաջացման ռիսկը,

գ/ բացառվեն անթույլատրելի կավիտացիան, վիբրացիան, աղմուկը փականային հանգույցներում և ջրատարներումում,

դ/ ապահովեն ջրամբարի արագ դատարկման պայմանն ապահովող ջրաելքերի ազատ, ապահով թողըը

ե/ ապահովեն ջրամբարում առավելագույն ջրի հորիզոնի /1051,5մ/ դեպքում խողովակների մուտքամասերի, ելքամասերի փականների հերմետիկ փակումը, թույլ չտալով դրանցով նորմայով /ГОСТ 9544-75, կամ УЧС 5-94 Norma CS/ թույլատրելի ջրանցման գերազանցում,

զ/ ջրահոսքի սահուն փոփոխությունն ապահովող շարժաբերման առաջարկվող կայանքները ունենան երկակի եղանակով՝ էլեկտրական և ձեռքի շարժաբերման հնարավորություն, ապահովված լինեն սահմանային և վթարային ավտոմատ տվիչներով ու անջատիչներով: Հուսալի և մատչելի լինեն պարզ շահագործման համար

է/ ընտրված տիպի կայանքը ունենա ջրատար բացվածքի մեծության չափորոշման պարզ, հուսալի ցուցիչ/տվիչ/

ը/ ամբողջությամբ վերցված հատակային ջրթողը ապահովի տվյալ բնակլիմայական պայմաններում ջրի թողքերի հուսալի փոփոխության ու տեղափոխման իրականացումը, համապատասխանի ՀՏԿ-ների անվտանգության պայմանների ու անվտանգության տեխնիկայի կանոնների պահանջներին

թ/ առաջարկվող տեխնիկական լուծումները պետք է գնահատված լինեն նաև հիդրավիլիկական մոդելավորման արդյունքով, կամ բերվեն մոդելավորման կատարման անհրաժեշտության բացակայության պատշաճ հիմնավորումներ:

3.Տեխնիկական լուծումների մշակման ընթացքում՝

ա/ ջրահոսքի հիդրավիկական հարվածի խնդրի դիտարկման ժամանակ գնահատել նաև օդահան խողովակների տեխնիկական վիճակն ու թողունակությունը:

բ/ հատակային ջրթողի վերջում /ցանկացած ընտրված փականների տարբերակի դեպքում/ պարտադիր նախատեսել առկա հիդրավիկական պայմաններին համապատասխան՝

- ջրաչափական հանգույց՝ հոսքաչափ սարքավորումներով
- ջրծեծ-ջրմարիչ ջրավազանը բերվածքներից մաքրել-լվանալու, դատարկելու հարթ փականային հանգույց՝ նախագծվող d=530մմ ջրիեռ խողովակի մուտքի վրա

4.Նախագիծը պետք է կազմված լինի հայերեն լեզվով և իր մեջ պարունակի՝

ա/ բանվորական նախագիծ՝ իր մասնագրերով

բ/ աշխատանքների իրականացման պլան-ժամանակացույց՝ N 1 փականի նորով փոխարինման գործընթացի հետ փոխկապակցված գետահոսքի բնական ելքերի հեռացման և մոնտաժման սխեմա /աշխատանքների կատարման տեխնալոգիա/

գ/ աշխատանքների ծավալների տեղեկագիր, նախահաշիվ /կոնֆեդիցիա/:

դ/ աշխատանքների կատարման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների, աշխատանքային ռեսուսների, լիցենզիաների ցանկը, կատարվող աշխատանքների երաշխիքային ժամկետները:

ե/ Նախագծում և Ծավալաթերթում օգտագործվող շինարարական նյութերի, պատրաստվածքների հատկանիշների մանրամասն և սպառիչ նկարագրություն: Նախագծողը պետք է կատարի համապատասխան ինժեներական ուսումնասիրություններ, առաջացած վթարային տեղամասերի երկարությունները և տեխնիկական վիճակը ճշգրտելու համար: Իրականացնի անհապաղ վերականգնողական աշխատանքների նախագծեր:

4.1 Նախագիծ կազմողը պարտավոր է ներկայացնել նաև լիցենզավորված կազմակերպության կողմից նախագծի փորձաքննության եզրակացությունը:

Փորձաքննության անցկացման արժեքը պետք է ընդգրկվի պայմանագրի ֆինանսական առաջարկի մեջ:

4.2 Բոլոր գծագրերը պետք է պատրաստվեն՝ օգտագործելով համակարգչային CAD ծրագիրը և համապատասխանեն A0 կամ A1 չափին: Բոլոր փաստաթղթերն ու զեկույցները պետք է լինեն A4 ձևաչափով տպագրված:

4.3 Նախագիծը պատվիրատուին է ներկայացվում 5 օրինակից թղթային տարբերակով (կնքված և ստորագրված) և էլեկտրոնային կրիչով:

- ա/տեխնիկական մասնագրեր-5 օրինակ
- բ/ բացատրագրեր -5 օրինակ
- գ/ գծագրեր- 5 օրինակ
- դ/ աշխատանքների ծավալների ցուցակ - 5 օրինակ
- ե/ նախահաշիվ - 4 օրինակ:

ՆՇՈՒՄ. Կատրողը, առանց Պատվիրատուի գրավոր համաձայնության, չի կարող սեփականացնել, օգտագործել կամ հրապարակայնորեն տարածել հիշյալ աշխատանքների փաստաթղթերը:

Ջրամբարի վերաբերյալ տեխնիկական բնույթի լրացուցիչ տվյալներ, տեղեկություններ կարող է ստանալ ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի «Ջրառ» ՓԲԸ-ից:

* աշխատանքի կատարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ԿԱՏԱՐՈՂ

ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտե

«Հայջրնախագիծ ինստիտուտ» ՓԲԸ

ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա

ք. Երևան, Վ. Վաղարշյան 12

ՖՆ աշխատակազմի գործառնական

«Հայջրնախագիծ» ՓԲԸ

վարչություն

ՀՀ 150000088680300

Հ/Հ 900011015915

ՀՀ ՀՀ 00012859

ՀՀ ՀՀ 02555816

Կոմիտեի աշխատակազմի ղեկավար

ՅՈՒ ՋԱՎԱԴՅԱՆ

Մ ՄԱԿԻՆՅԱՆ



ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑ*

«Վ» դրամ

Աշխատանքի						
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2017թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**			
		«Վ Ազատի ջրամբարի հատակային ջրթողի վերակառուցման և վերազննման աշխատանքների համար անհրաժեշտ նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքներ	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71241200/310	նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում	4 980 000	4 980 000	4 980 000	4 980 000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Վ ԷԲՊՆ» ջրային տնտեսության պետական կոմիտե
 «Վ ք. Երևան, Վարդանանց 13ա
 ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
 Հ/Հ 900011015915
 ՀՎՀՀ 02555816

Կոմիտեի աշխատակազմի ղեկավար
 Մ. ԱՄԿԻՆՅԱՆ



ԿԱՏԱՐՈՂ

«ՎՀայքնախագիծ ինստիտուտ» ՓԲԸ
 ք. Երևան, Վ. Վաղարշյան 12
 «ՎՀայթիզնեսթանկ» ՓԲԸ
 Հ/Հ 1150000088680300
 ՀՎՀՀ 00012859

ՅՈՒ. ԶԱՎԱԴՅԱՆ



Պայմանագրի կողմ

գտնվելու վայրը _____
հհ _____

հվհհ _____

Պատվիրատու

գտնվելու վայրը _____
հհ _____

հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՍ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 2017 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 2017թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ « »
« » 2017թ. դուրս գրված N _____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն
արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

Կատարված աշխատանքի							
N	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ-ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

Աշխատանքն ընդունեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

ԱԿՏ N
 պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 2017 թ. _____-ին կնքված N _____ գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 2017թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

 ազգանուն, անուն

 ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

 ազգանուն, անուն

 ստորագրություն